ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"ASSESSMENT AND TESTING CENTER"
STATE NON TRADE ORGANIZATION

ՀՀ, ք. Երևան, 0025, Չայլախյան 4
Հեռ. 010 57 63 37,
E-mail: info@atc.am

Chaylakhyan str. 4, Yerevan, 0025, RA
Tel. +374 10 57 63 37,
E-mail: info@atc.am

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելվածի 64-րդ, 67-րդ կետերը՝ 2024թ. դեկտեմբերի 9-ին «Մաթեմատիկա» և «Կենսաբանություն» առարկաների ուսուցիչների կամավոր ատեստավորման առարկայական բողոքարկման հանձնաժողովների կողմից հրավիրված նիստում լրացուցիչ քննարկվել են հետևյալ հարցերը և ընդունվել են հետևյալ որոշումները.

1. Միավոր տալ նաև այն ուսուցիչներին, որոնք «Մաթեմատիկա» առարկայի հետևյալ առաջադրանքում որպես ճիշտ պատասխան նշել են 9՝ հանում գործողության փոխարեն կատարելով բազմապատկում գործողությունը.

   «Գտնել $19^{15} - 11^{10}$ թվի տասական գրառման վերջին նիշը:»:

2. Միավոր տալ նաև այն ուսուցիչներին, որոնք «Կենսաբանություն» առարկայի հետևյալ առաջադրանքում որպես ճիշտ պատասխան նշել են 504.000.

   «Սննման շղթան կազմված է հետևյալ սննդային մակարդակներից. պրոդուցենտներ, I կարգի կոնսումենտներ, I I կարգի կոնսումենտներ, I I I կարգի կոնսումենտներ: Առաջնային կենսազանգվածը կազմում էր 6300000 կՋ, և յուրաքանչյուր սնման մակարդակ է անցնում նախորդի կենսազանգվածի 8%-ը: Քանի հազար կՋ է կազմում երկրորդ սննդային մակարդակում կուտակվող էներգիայի քանակը»:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ